 Վ. Կարապետյան

ԱՌՈՒՄԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

04.10.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 27.09.2016թ.-ի թիվ 86 կարգադրությունը, <<Ազատեկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2014-2015թ.թ.-ների գործունեության ֆինանսական ներքին աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանք-ներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Ա. Ղազարյանը և հաշվապահ՝ Հ. Բադալյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 10 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

<<Ազատեկի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ գ. Ազատեկ:

Գործունեության նպատակը՝ աշակերտների հանրակրթական ուսուցում:

2014 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 11:

-աշակերտների թիվը- 76:

-աշակերտների միջին խտությունը- 6.9:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 30, միջին խտությունը 7.5:

Միջին դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 27, միջին խտությունը 6.7:

Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 19, միջին խտությունը 6.3:

Աշխատողների թվաքանակը 30, մանկավարժական աշխատողների թվաքանակը 19, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 14.6, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 11, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 10.5:

Ընդամենը դրույքների թիվը 25.1:

Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 17 ժամ կամ 0.77 դրույք:

2015 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 11:

-աշակերտների թիվը- 72:

-աշակերտների միջին խտությունը- 6.5:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 21, միջին խտությունը 5.2:

Միջին դպրոց 5 դասարան, աշակերտների թիվը 38, միջին խտությունը 7.6:

Ավագ դպրոց 2 դասարան, աշակերտների թիվը 13, միջին խտությունը 6.5:

Աշխատողների թվաքանակը 30, մանկավարժական աշխատողների թվաքանակը 18, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 14.6, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 12, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 10.5:

Ընդամենը դրույքների թիվը 25.1:

Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 17.8 ժամ կամ 0.81 դրույք:

**2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված
տվյալների արժանահավատության ստուգում**

2014թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1. Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	30	30	X	30	27	X	19	19	X	
2. Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	30	30	X	30	27	X	19	19	X	
3. Աշակերտների թիվը ըստ մատյանների	30	30	X	30	27	X	19	19	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	121097	121097		121097	121097		121097	121097		
5. Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ. դրամ/	1941.5	970.7	2912.2	2608.7	1304.3	3913.0	1770.6	885.3	2655.9	9481.1
6. Պահպանման ծախսեր/հազ. դրամ/	X	X		X	X		X	X		16876
7. Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		4559.9
8. Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9. Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		30917.0
Ըստ աուդիտի 3*4	1941.5	970.7	2912.2	2608.7	1304.3	3913.0	1770.6	885.3	2655.9	9481.1
6. Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16876
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		4559.9
8. Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		30917.0
Շեղում/ավելի ֆինանս.+ պակաս ֆինանս. -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 30, 29 և 19 աշակերտ:

2015թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1. Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	30	21	X	27	38	X	19	13	X	
2. Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	30	21	X	27	38	X	19	13	X	
3. Աշակերտների թիվը ըստ մատյանների	30	21	X	27	38	X	19	13	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	124000	124000		124000	124000		124000	124000		
5. Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	1795.0	897.5	2692.5	2864.8	1432.4	4297.2	1627.5	813.8	2441.3	9430.9
6. Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		19000
7. Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		2830.8
8. Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9. Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		31261.7
Ըստ աուդիտի 3*4	1795.0	897.5	2692.5	2864.8	1432.4	4297.2	1627.5	813.8	2441.3	9430.9
6. Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		19000
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		2830.8
8. Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		31261.7
Շեղում/ավելի ֆինանս. +, պակաս ֆինանս. -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 27, 31 և 17 աշակերտ:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ԸՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը գործել է բավարար, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	հազ.դրամ				
			Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	38060.0	38060.0	37754.7	37754.7	35490.3	34574.5	-3485.5
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	38037.2	34318.9	37754.7	37754.7	35490.3	34574.5	-3462.7
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	34444.3		34271.8	34262.5	32463.2	31542.7	-2901.6
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	3592.9		3482.9	3492.2	3027.1	3031.8	-561.1
Գրասենյակային նյութեր և հագուստ	70		61	57	56	57	-13
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	457.1		425.4	435	425.4	435	-22.1
Հատուկ նպատ. նյութեր	55.9		20	20	20	20	-35.9
Այլ ծախսեր	26.7		26.7	26.7	26.7	26.7	0
Գործառնական և բանկ. ծառ. ծախսեր							0
Ներքին գործուղումներ							0
Կապի ծառայության վճարներ	140		125.2	125.1	115.2	109.3	-30.7
Կոմունալ ծառայությունների վճար	2683.2		2652	2655.8	2211.2	2211.2	-472
Էլ. էներգիայի ծախսեր	183.5		163.3	167.1	121.4	121.4	-62.1
Վառելիքի և ջեռուցում ծախսեր	1140		1139	1139	740.1	740.1	-399.9
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	10						-10
Տրանսպորտ	1349.7		1349.7	1349.7	1349.7	1349.7	0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	160		172.6	172.6	172.6	172.6	12.6
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ. միջոցների ազատ մնաց.	22.8	22.8					0
Այլ ծրագրեր*		1009.6					0
Այլ ծրագրեր**		437.5					
Այլ ծրագրեր***		894.8					
Այլ ծրագրեր****		1349.7					
Այլ ծրագրեր*****		26.7					

34318.9 հազ.դրամ՝ Ազատեկի միջնակարգ դպրոց՝ 30917.0 հազ.դրամ, Փոռի հիմնական դպրոց՝ 3401.9 հազ.դրամ:

* Նախադպրոցական կրթության ծրագրով հատկացված գումար: Նախատեսվել է 1009.6 հազ.դրամ (9 աշակերտ), ֆինանսավորվել է 1009.6 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմել է 1012.6 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 1012.6 հազ.դրամ:

** ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 437.5 հազ.դրամ /40 աշակերտ/, Ֆինանսավորվել է 437.5 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 422.5 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 406.9 հազ.դրամ, մնացորդը՝ 30.6 հազ.դրամ:

*** ՀՀ կառավարության որոշմամբ նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման փոխհատուցման գումար:

**** Տրանսպորտային ծառայության գումար:

***** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

հազ.դրամ

Անվանումը	Նախատես- ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	38828.6	38830.8	38236.7	38236.7	38208.6	38201.1	-627.5
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	38828.6	35147	38236.7	38236.7	38208.6	38201.1	-627.5
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	35115.2		34621.3	34621.3	34524.8	34501.2	-614
Սոց. ամապահով երեխաների դասագրքեր	29.4		29.4	29.4	29.4	29.4	0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	3684		3586	3586	3654.4	3670.5	-13.5
Գրասենյակային նյութեր և հագուստ	70.9		62.4	62.4	62.4	62.4	-8.5
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	785.5		696	696	696	696	-89.5
Հատուկ նպատ. նյութեր	50		36	36	36	36	-14
Այլ ծախսեր	27		27	27	27	27	0
Գործառնական և բանկ. ծառ. ծախսեր			0.6	0.6	0.6	0.6	0.6
Ներքին գործուղումներ							0
Կապի ծառայության վճարներ	120		117.4	117.4	112	128.1	8.1
Կոմունալ ծառայությունների վճար	2440.6		2412.2	2412.2	2486	2486	45.4
Էլ. էներգիայի ծախսեր	127.2		99.1	99.1	127.2	127.2	0
Վառելիքի և ջեռուցում ծախսեր	931.3		921	921	966.7	966.7	35.4
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	6.6		16.6	16.6	16.6	16.6	10
Տրանսպորտ	1375.5		1375.5	1375.5	1375.5	1375.5	0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	190		234.4	234.4	234.4	234.4	44.4
Բանկի տոկոս		2.2					0
Տարեսկզբի դրամ. միջոցների ազատ մնաց.		305.3					0
Այլ ծրագրեր*		1116.9					0
Այլ ծրագրեր**		854.5					
Այլ ծրագրեր***		1375.5					
Այլ ծրագրեր****		29.4					

35147.0 հազ.դրամ՝ Ազատելի միջնակարգ դպրոց՝ 31261.7 հազ.դրամ, Փողի հիմնական դպրոց՝ 3885.3 հազ.դրամ:

* Նախադպրոցական կրթության ծրագրով հատկացված գումար: Նախատեսվել է 1116.9 հազ.դրամ (9 աշակերտ), ֆինանսավորվել է 1116.9 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմել է 1116.9 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 1116.9 հազ.դրամ:

** ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 692-Ն որոշմամբ դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով հատկացված գումար: Նախատեսվել է 854.5 հազ.դրամ /27 աշակերտ/, ֆինանսավորվել է 854.5 հազ.դրամ: Փաստացի ծախսը կազմել է 749.4 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 749.4 հազ.դրամ, մնացորդը՝ 105.1 հազ.դրամ:

*** Տրանսպորտային ծառայության գումար:

**** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ էներգ. ծախսեր.		Գազ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
ՄՈ.01.01.14թ		2711.6				10.0		27.9		334.9			0.0	3084.4
Շրջանառությ ուն 2014թ.	34262.5	31542.7			125.1	109.3	167.1	121.4	1139.0	740.1	2061.0	2061.0	37754.7	34574.5
ՄՈ.01.01.15թ	8.2				5.8		17.8		64.0				95.8	0.0
Շրջանառությ ուն 2015թ.	34621.3	34501.2			117.4	128.1	99.1	127.2	921.0	966.7	2477.9	2477.9	38236.7	38201.1
ՄՈ.01.01.16թ	128.3					4.9		10.3	18.3				146.6	15.2

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	67834.8	67834.8	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	67834.8	67834.8	0
արժեքը	67834.8	67834.8	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	883.1	900.3	17.2
Նյութեր	170	157.6	-12.4
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր	119	148.6	29.6
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	104.7	130.3	25.6
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ. տարբ. դեբիտ. հետ	14.3	18.3	4
դրամական միջոցներ, որից	594.1	594.1	0
դրամարկդ			0
հաշվարկային հաշիվ	594.1	594.1	0
Հաշվեկշիռ	68717.9	68735.1	17.2
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	68717.9	68717.9	0
Լրացուցիչ կապիտալ	68717.9	68717.9	0
Հաշվետու տար. չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	0	17.2	17.2
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ		15.2	15.2
հաշվարկներ բյուջեի հետ		2	2
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ			0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
զալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	68717.9	68735.1	17.2

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2015թ. - առ 01.01.2016թ.

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	305.3	305.3	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	35147.0	35147.0	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	3378.5	3378.5	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	38525.5	38525.5	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Չեղք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100	850.8	850.8	0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	2764.6	2764.6	0.0
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	34621.3	34621.3	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	38236.7	38236.7	0.0
Գործառնական գործունեությունից ջուտ դրամական հոսքեր	190	288.8	288.8	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		594.1	594.1	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ն.Կարապետյանս՝ աշխատանքային խմբի ղեկավար, գլխավոր մասնագետներ՝ Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Ազատելի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2014-2015թ.թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջման ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման գործունեությունը գնահատվել է բավարար: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

• 2014-2015թթ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 17 ժամ կամ 0.77 դրույք: 2015-2016թթ.-ին՝ 17.8 ժամ կամ 0.81 դրույք: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2015-2016թթ.-ին 2014-2015թթ.-ի նկատմամբ աճման տենդենց է կրում:

Առ 01.01.2016 թ.-ի դրությամբ կազմակերպության դրամական մնացորդը կազմել է 594.1 հազ.դրամ, դեբիտորական պարտքը՝ 148.6 հազ.դրամ /եկամտային հարկի գծով՝ 106.7 հազ.դրամ, կուտակային վճար՝ 23.6 հազ.դրամ, ջեռուցում /գազով՝ 18.3 հազ.դրամ /, կրեդիտորական պարտքը՝ 17.2 հազ. դրամ /էներգետիկ ծառայություններ՝ 10.3 հազ.դրամ, կապի ծառայություն՝ 4.9 հազ.դրամ և սոցիալական վճար՝ 2.0 հազ.դրամ/: 17.2 հազ.դրամի կրեդիտորական պարտքը դրամական մնացորդով ամբողջությամբ ֆակտավազմ է:

Առ 01.01.2016թ.-ի դրությամբ դրամական միջոցների ազատ մնացորդը կազմում է 725.5 հազ.դրամ:

Արձանագրված թերություններ և խախտումներ

Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները ամբողջ ծավալով չեն օգտագործվել: Արդյունքում կուտակվել է 594.1 հազ. դրամի դրամական մնացորդ:

2015-2016թթ.-ի ուսումնական տարվա սեպտեմբեր ամսվանից մինչև 2016թ.-ի հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում հաստատված տարիֆիկացիոն ցուցակներում տնօրենի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը հաշվարկվել է 10.5 դասաժամ: <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2007 թ.-ի փետրվարի 1-ի <<Առողջապահական, հոգաբարձության, մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին>> թիվ 201-Ն որոշման 5-րդ հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատությունների վարչական աշխատողները (տնօրեն) կարող են շաբաթական դասավանդել մինչև 8 դասաժամ ներառյալ: Ավել է հաշվարկվել 2.5 դասաժամ, որի արդյունքում հաշվարկվել և վճարվել է 45.3 հազ. դրամ աշխատավարձ /4530 դրույքաչափ * 2.5 դասաժամ * 4 ամիս/, որից եկամտային հարկ՝ 11.0 հազ. դրամ:

2015թ.-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվության և հաշվապահական հաշվեկշռի մեջ ճիշտ չեն արտացոլված բյուջետային տարվա վերջի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝

ա/ Հաստատված նախահաշվով նախատեսված գումարները օգտագործել ամբողջ ծավալով, թույլ չտալ դրամական միջոցների տարեվերջյան կուտակում: (Առաջարկությունների դասակարգման փոքր չափանիշ):


բ/ Աշխատավարձի հաշվարկը կատարել սահմանված հաստիքների և հաստիքային միավորների չափով, դրույքային միավորները սահմանել կառավարության 2007 թ.-ի փետրվարի 1-ի <<Առողջապահական, հոգաբարձության, մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին>> թիվ 201-Ն որոշման 5-րդ հավելվածի 12-րդ կետի համաձայն: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

գ/ Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը կազմել ճիշտ և արժանահավատ: (Առաջարկությունների դասակարգման փոքր չափանիշ):

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին առուիտի բաժնի
աշխատանքային խմբի ղեկավար՝
Ներքին առուիտորներ՝

Դպրոցի տնօրեն՝
Հաշվապահ՝



Ն. Կարապետյան
Հ. Ավետիսյան
Խ. Խաչատրյան
Ա. Ղազարյան
Հ. Բադալյան